



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

CENTRE FOR POLICY STUDIES

*Տիրուհի Հարությունյան*

# Արցախյան երկրորդ պատերազմում Հայաստանի և Ադրբեջանի Մարդու իրավունքների պաշտպանների արտաքին հաղորդակցության արդյունավետությունը

Հրապարակումը լույս է տեսնում Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ապատեղեկատվության վերլուծություն և փորձագիտական կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում:

Երևան, ապրիլ 2021

Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ապատեղեկատվության վերլուծություն և փորձագիտական կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում կազմակերպվել են դասընթացներ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների (մասնավորապես մարզային և տարածաշրջանային հասարակական ու երիտասարդական կազմակերպություններից), երիտասարդ վերլուծաբանների, ինչպես նաև ուսանողների համար: Դասընթացներում ներառված էին հետևյալ թեմաները.

- Հետազոտության դիզայն և մեթոդներ,
- Մեդիագրագիտություն. արշավ արդի լրատվական մանիպուլյացիաների դեմ,
- Արդյունավետ հաղորդակցության կազմակերպում ճգնաժամային պայմաններում,
- Ճգնաժամային իրավիճակներում սոցիալական ՁԼՄ-ներում ատելության խոսքի դրսևորումները:

Դասընթացների նպատակն էր նպաստել մասնակիցների կարողությունների զարգացմանը՝ հետագայում արդյունավետ հետազոտական աշխատանքներ իրականացնելու և հասարակության լայն շերտերում մեդիագրագիտությունը խթանող նախաձեռնություններով հանդես գալու համար: Մասնակիցները նաև ունեցել են գործնական աշխատանք կատարելու հնարավորություն՝ դասընթացները վարած փորձագետների խորհրդատվությամբ նախապատրաստելով իրենց հոդվածները:

Ծրագրի մասնակիցների հրապարակումները չեն արտահայտում Քաղաքականության հետազոտական կենտրոնի, Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կամ որևէ այլ կառույցի տեսակետը:

Հոդվածաշարի խմբագիրներ՝ Արմեն Գրիգորյան, Վիկտորյա Մելքոնյան

*Տիրուհի Հարությունյանը սովորում է ԵՊՀ-ի Իրավագիտության ֆակուլտետում:*

*Հեղինակը շնորհակալություն է հայտնում հասարակայնության հետ կապերի մասնագետ Նվարդ Մելքոնյանին՝ հետազոտական աշխատանքի թեմայի ընտրության, կառուցվածքի հարցում տրամադրած նյութերի ու խորհուրդների համար, ինչպես նաև քաղաքագետ Գոռ Պետրոսյանին՝ աշխատանքի նախնական տարբերակի ստուգման, արված դիտողությունների ու խորհուրդների համար, որոնք օգնեցին բարելավել աշխատանքի որակը:*

## **Արցախյան երկրորդ պատերազմում Հայաստանի և Ադրբեջանի Մարդու իրավունքների պաշտպանների արտաքին հաղորդակցության արդյունավետությունը**

Ադրբեջանի և Արցախի միջև 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմը տևեց 44 օր և ավարտվեց պատերազմը դադարեցնելու մասին հայտարարության ստորագրմամբ: Այդ պահից ի վեր շարունակվում է պատերազմող երկրների (Ադրբեջանի, Հայաստանի, Արցախի) Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) և այլ իրավապաշտպան մարմինների գործունեությունն՝ ուղղված ստեղծված իրադրության վրա միջազգային հանրության, միջազգային իրավապաշտպան կառույցների ուշադրությունը հրավիրելուն, նրանցից իրենց լիազորություններով պայմանավորված համարժեք քայլեր պահանջելուն:

Այս աշխատանքի նպատակն է գնահատել վերոնշյալ պատերազմում Հայաստանի և Արցախի ՄԻՊ-երի **միջազգային կառույցների հետ ունեցած հաղորդակցության արդյունավետությունը**՝ այն դիտարկելով քաղաքացիների իրավունքների պաշտպանության, այդ կառույցներին ներկայացվող տեղեկատվության ճշմարտացիության, հակամարտող մյուս կողմի իրավապաշտպան կառույցների գործունեության հետ համեմատության տեսանկյունից: Հետազոտության առջև դրված հիմնական խնդիրը պատերազմի ժամանակ իրավապաշտպան մարմինների գործունեության ուսումնասիրումն է, որն ուղղված է

- խաղաղ բնակչության իրավունքների պաշտպանությանը,
- գերիների ու զոհվածների նկատմամբ դաժանությունների, վայրագությունների բացահայտմանը,
- գերիների վերադարձմանը,
- հակամարտության գոտում արգելված զինատեսակների օգտագործման վերաբերյալ փաստերի հավաքագրման,
- վարձկանների ներգրավման վերաբերյալ ապացույցների ձեռքբերմանը:

Աշխատանքի մեթոդաբանությունը ներառում է հակամարտող երկրների պաշտոնական (և ոչ միայն) լրատվամիջոցների, իրավապաշտպան մարմինների իրենց պաշտոնական կայքերում արված հայտարարությունների, հարցազրույցների, գործնական քայլերի, դրանց ի պատասխան միջազգային կառույցների արձագանքի ուսումնասիրումը, նրանց գործունեության միմյանց հետ համեմատումը, ձեռք բերված տվյալների համադրումն այլ փաստերի հետ, բազմակողմանի ուսումնասիրումը, մշակումն ու վերլուծությունը:

### ***Խաղաղ բնակչության իրավունքների պաշտպանությունը***

Արդեն 2020 թ. սեպտեմբերի 28-ին ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանը Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Մարդու իրավունքների խորհրդին և միջազգային այլ կառույցներին էր ուղարկել **հատուկ հաղորդում Արցախում նախորդ օրվանից ադրբեջանական ռազմաօդային և հրետանային, այդ թվում՝ քաղաքացիական բնակչության նկատմամբ թիրախային ագրեսիվ հարձակումների արդյունքում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ**: Այս ամենի, այդ թվում ադրբեջանական զինված ուժերի կողմից իրականացրած դաժանությունների ու արգելված զինատեսակների ահաբեկչական մեթոդներով օգտագործման մասին իր 2-րդ միջանկյալ զեկույցում փաստագրված ու անհրաժեշտ վերլուծությամբ մանրամասն ներկայացրել է Արցախի ՄԻՊ Արտակ Բեգլարյանը:<sup>1</sup>

ՀՀ ՄԻՊ Ա. Թաթոյանը ղեկտեմբերին նշել էր, որ պատերազմի ընթացքում ու դրանից հետո ադրբեջանական դաժանությունների վերաբերյալ նոր ապացույցներ էին ուղարկվում միջազգային մարմիններին: Ընդ որում, սեպտեմբերի 27-ից սկսած առկա նյութերը դարձրել էին միասնական փաթեթ, և ուղարկում էին նաև **այն երկրների քրեական հետապնդման մարմիններին, որոնք ունեն համընդհանուր իրավագործություն (universal jurisdiction):**<sup>2</sup>

Այս նույն ընթացքում Ադրբեջանն էլ իր հերթին է դիմել միջազգային կառույցներին, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ)՝ Հայաստանի զինված ուժերի կողմից հրթիռային և հրետանային հարվածների արդյունքում քաղաքացիական անձանց մահվան և վիրավորելու բազմաթիվ դեպքերի, նրանց իրավունքների և ազատությունների ոտնահարման կապակցությամբ<sup>3</sup>: Ադրբեջանը ՄԻԵԴ-ին խնդրում է Հայաստանին պարտավորեցնել «հեռացնել Ադրբեջանի տարածքում ապօրինի տեղակայված իր ռազմական ուժերն ու սարքավորումները» և «հրաժարվել Ադրբեջանի Հանրապետության և նրա քաղաքացիների դեմ ուղղված աստելության քաղաքականությունից»:<sup>4</sup>

<sup>1</sup> <https://artsakhombuds.am/hy/document/785>

<sup>2</sup> [https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=771490573450150&id=100017676420633](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=771490573450150&id=100017676420633)

<sup>3</sup> <http://interfax.az/view/824601>, <http://interfax.az/view/818008>

<sup>4</sup> <http://interfax.az/view/818008>

Ադրբեջանի Գլխավոր դատախազ Կամրան Բայրամը շեշտել է, որ ռազմական գործողությունների ընթացքում Հայաստանի զինված ուժերը շուրջ 30 հազար արկ ու 227 հրթիռ էին արձակել Ադրբեջանի քաղաքների ու շրջանների խաղաղ բնակչության ուղղությամբ, և որ այդ հրթիռային ու հրետանային հարձակումների արդյունքում զոհվել է Ադրբեջանի 93 խաղաղ բնակիչ, վիրավորվել է 407 մարդ, այդ թվում՝ 50 անչափահաս երեխա և 101 կին:<sup>5</sup>

Արցախի ՄԻՊ-ը նույն ժամանակահատվածում հայտարարել է, որ 2020 թ. սեպտեմբերի 27-ից մինչև դեկտեմբերի 22-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի զինված ուժերի կողմից սպանվել է ապացուցված 60 քաղաքացիական անձ, այդ թվում՝ թիրախային հարվածների հետևանքով՝ 39, իսկ գերեվարման մեջ հայտնվել՝ 21 քաղաքացիական անձ: Արձանագրվել են խոշտանգման և դիակների խեղման, անխուսափելիորեն քաղաքացիական մահերի հանգեցնող թիրախային հարվածների մի շարք դեպքեր: Արձանագրվել է նաև 163 քաղաքացիական անձի վիրավորման դեպք, որոնց զգալի մասը տեղի էր ունեցել այլ անձանց մահվան հանգեցրած հարվածների հետևանքով:<sup>6</sup>

2021 թ. հունվարի 15-ին և փետրվարի 1-ին ՄԻԵԴ-ը ստացել էր համապատասխանաբար «Ադրբեջանն ընդդեմ Հայաստանի» և «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» միջպետական գանգատները: Հայցվորները պնդում էին 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկիզբ առած ռազմական գործողությունների ընթացքում Մարդու իրավունքների կոնվենցիայի լայնատարած խախտումների, այդ թվում՝ քաղաքացիական անձանց, ինչպես նաև քաղաքացիական և հանրային գույքի վրա հարձակումների, զինվորականների և քաղաքացիական անձանց մահապատիժների, խոշտանգումների և նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի, ռազմագերիներին չհանձնելու, մարտական գործողությունների շրջաններից քաղաքացիական բնակչության բռնի տեղահանման մասին: Բացի այդ, Ադրբեջանը նաև պնդում էր, թե Հայաստանը պատասխանատու է 1992 թ. ի վեր Լեռնային Ղարաբաղում ու շրջապատող տարածքներում Կոնվենցիայի խախտումների, այդ թվում՝ հարյուր հազարավոր ադրբեջանցիների բռնի տեղահանման, անհետացման և նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի, մշակութային և կրոնական սեփականության ոչնչացման համար: Որպես առաջին քայլ՝ ՄԻԵԴ-ը գանգատներն ստանալու մասին ծանուցել է պատասխանող կողմերին, իսկ այժմ ուսումնասիրելու է միջպետական գանգատները քննության ընդունելու հարցը:<sup>7</sup>

Խաղաղ բնակչության նկատմամբ հեռահար հրթիռների և մարտական անօդաչու թռչող սարքերի օգտագործման մասին են վկայում նաև BBC News-ի Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտից և Associated Press գործակալության նկարահանած տեսանյութերը:<sup>8</sup>

---

<sup>5</sup> <http://interfax.az/view/825220>

<sup>6</sup> <https://www.facebook.com/artak.beglaryan/posts/3821458597892349>

<sup>7</sup> <https://www.azatutyun.am/a/31085948.html>

<sup>8</sup> <https://www.facebook.com/100017676420633/videos/723537691578772>,

[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=740761429856398&id=100017676420633](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=740761429856398&id=100017676420633)

*Կարող ենք եզրակացնել, որ հակամարտության երկու կողմերն էլ սեփական քաղաքացիական անձանց իրավունքների պաշտպանության համար դիմում են տարբեր միջազգային մարմինների և սպասում են վերջիններիս պատշաճ արձագանքին:*

### **Գերեվարված անձինք**

Նոյեմբերի 2-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Գերագույն հանձնակատար Միշել Բաչելետը հայտարարել է Լեռնային Ղարաբաղում պատերազմական հանցագործության հնարավորության մասին: ՀՀ ՄԻՊ Ա. Թաթոյանը հայտարարել է, որ տիկին Հանձնակատարը ենթադրաբար նկատի ուներ Հադրութ քաղաքում երկու հայ գերիների սպանությունն ադրբեջանական զինված ուժերի կողմից:<sup>9</sup>

ՀՀ ՄԻՊ-ը հայ գերիների ու զոհվածների մարմինների նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի դաժանությունների ու վայրագությունների վերաբերյալ արդեն 6 փակ զեկույց է ուղարկել միջազգային մարմիններին:

Դեկտեմբերի 2-ին Human Rights Watch-ը հրապարակել է զեկույց, որում արձանագրել է, որ ադրբեջանական ուժերը գերեվարել են բազմաթիվ էթնիկ հայ զինվորականների: Ըստ զեկույցի՝ հայ գերիները ենթարկվել են բռնության ու նվաստացման: Այդ մասին վկայում են տեսանյութերը, որոնք հոկտեմբերից լայնորեն տարածվել են սոցիալական ցանցերում: Human Rights Watch կազմակերպության հետ հանդիպման ընթացքում ՀՀ ՄԻՊ Ա. Թաթոյանը ներկայացրել է ադրբեջանական վայրագությունները՝ շեշտելով, որ գերիների վերադարձն ու մարմինների փոխանակումը պահանջում էր հրատապ լուծում:<sup>10</sup>

Դեկտեմբերին սկսված ռազմագերիների և պատանդների փոխանակման գործընթացից հետո (այն դեռ ընթացքում է) Ադրբեջանի օմբուդսմեն Սաբինա Ալիևան հայտարարել էր, որ համապատասխան միջազգային կազմակերպություններին զեկույց է ուղարկել Հայաստանում ադրբեջանցի գերիների նկատմամբ վատ վերաբերմունքի մասին:<sup>11</sup>

Եվրադատարանը երկու երկրներից թվով 241 գերեվարված անձի վերաբերյալ ստացել է դիմումներ, որոնցից 228-ը՝ հայեր, 13-ը՝ ադրբեջանցիներ: ՄԻԵԴ-ը տեղեկատվություն է պահանջել այդ անձանց վերաբերյալ համապատասխան կառավարություններից:<sup>12</sup>

Դեկտեմբերի 18-ի դրությամբ համացանցում շրջանառվում էր մի տեսանյութ, որում նշվում էր, թե ադրբեջանական բանակը գերեվարել էր 62 հայ զինծառայողի: Արցախի Հանրապետության ՊՆ-ն հայտարարեց, որ դեկտեմբերի 15-ի երեկոյան, դեռևս անհայտ պայմաններում, կորել էր կապը Հադրութի Հին Թաղեր և Խծաբերդ

<sup>9</sup> [https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=744807602785114&id=100017676420633](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=744807602785114&id=100017676420633)

<sup>10</sup> <https://www.hrw.org/news/2020/12/02/azerbaijan-armenian-prisoners-war-badly-mistreated>

<sup>11</sup> <http://interfax.az/view/825207>

<sup>12</sup> <https://www.azatutyun.am/a/31085948.html>

գյուղերի ուղղությամբ տեղակայված ԱՀ ՊԲ մի քանի մարտական դիրքերի անձնակազմի հետ: Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանն էլ հայտարարեց, որ Խծաբերդի ուղղությամբ մի քանի տասնյակ զինձառայողներ գերի էին ընկել:

Դեկտեմբերի 20-ին Լեռնային Ղարաբաղում ռուսաստանյան խաղաղապահ զորքերի հրամանատար Ռուստամ Մուրադովը հաստատել էր, որ պաշտոնական Բաքուն ընդունել էր 62 հայ զինձառայողների գերեվարման փաստը: Արդեն դեկտեմբերի 21-ին ՀՀ ՊՆ նախարար Վաղարշակ Հարությունյանը հայտնեց, որ գերեվարված 62 զինձառայողների ցանկը հանձնվել էր Կարմիր Խաչի գրասենյակին:

Նույն ժամանակ Ադրբեջանի ԱԳՆ-ն հայտարարեց, որ այդ 62 զինվորները ահաբեկիչ-դիվերսանտներ են, քանի որ ռազմական գործողությունների դադարեցումից հետո էին հայտնվել Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում:

ՀՀ ՄԻՊ-ն անընդունելի է համարում ադրբեջանական կողմից նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մեկնաբանությունը որպես փաստաթուղթ, որն իբր վերաբերում է միայն ստորագրմանը նախորդող իրավիճակին: **Հայտարարությունը վերաբերում է բոլոր իրավիճակներին, ներառյալ հետպատերազմական գործողությունները:** Նա նաև նշել է, որ 62 հայ զինձառայողների դեմ քրեական գործ հարուցելը, նրանց ձերբակալելը և ահաբեկիչներ որակելը միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտում էր: Նրանք չեն կարող հետապնդվել միայն նրա համար, որ մասնակցել են ռազմական գործողություններին: Դա հստակ նշված է 1949-ի Ժնևյան Երրորդ կոնվենցիայում:

2021 թ. հունվարի 18-ին ՀՀ ՄԻՊ-ը նամակով դիմել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ, դեսպան Անջել Կասպիկին՝ Ադրբեջանից գերիների վերադարձի ու նրանց իրավունքների պաշտպանության հարցով:<sup>13</sup>

Հունվարի 28-ին 62 զինձառայողներից 5-ը վերադարձան հայրենիք, իսկ մյուսների հետ ապահովվում է հեռախոսակապը:

Եվրոպական արտաքին կապերի ծառայության մամուլի քարտուղար Պետեր Ստանոն Twitter-ի իր միկրոբլոգում գրել էր, որ Եվրամիությունը ողջունում է 5 ռազմագերիների վերադարձը Հայաստան և կոչ է անում Ադրբեջանին անհապաղ ազատ արձակել մնացած 57-ին: Նման հայտարարություններն Ադրբեջանի արտգործնախարարությունն անընդունելի էր համարել:<sup>14</sup>

**Նախ ՀՀ ՄԻՊ-ի վերոնշյալ հայտարարությունը, այնուհետև այդ զինձառայողներից 5-ի վերադարձը փաստում են նրանց ահաբեկիչ չլինելը, հակառակ պարագայում Ադրբեջանը թույլ չէր տա նրանց վերադարձը:**

*Միջազգային կառույցների, պաշտոնատար անձանց նման արձագանքները, գերիների վերադարձի առումով գրանցած արդյունքները թույլ են տալիս*

<sup>13</sup> [https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=792357458030128&id=100017676420633](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=792357458030128&id=100017676420633)

<sup>14</sup> <http://interfax.az/view/825767>

*եզրակացնել, որ ՀՀ ՄԻՊ-ը ձգտում է հնարավորինս տեղ հասցնել գերիների անհապաղ վերադարձի հարցը, հասնել դրա շուտափույթ լուծմանը:*

### **Արգելված զինատեսակներ**

ՀՀ ՄԻՊ-ը հայտնում է, որ սեպտեմբերի 27-ից սկսած Ադրբեջանի կողմից արգելված կասետային զինատեսակների շարունակական օգտագործմամբ թիրախային հարվածներ են հասցվել Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակավայրերի և խաղաղ բնակչության ուղղությամբ: Սեպտեմբերի 27-28-ին, հոկտեմբերի 2-4-ը Ադրբեջանի կողմից LAR-160 և «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ հրթիռներ են կիրառվել Հադրութ քաղաքի, մայրաքաղաք Ստեփանակերտի և մայրաքաղաքին հարող Շոշ գյուղի ուղղությամբ:<sup>15</sup> Արդեն նոյեմբերին սկսեցին օգտագործել այրող կասետային զենք, որի կիրառումը խաղաղ բնակչության ուղղությամբ արգելված է Ժնևյան և այլ միջազգային կոնվեցիաներով:<sup>16</sup> Ադրբեջանն այս փաստերը հերքեց ու փոխարենն այդպիսի զինատեսակ օգտագործելու համար մեղադրեց հայկական կողմին:

Ադրբեջանը հայտարարել էր, որ Հայաստանի զինված ուժերը հոկտեմբերի 27-28-ին կրակ էին բացել Ադրբեջանի Բարդա քաղաքի վրա: Հոկտեմբերի 30-ին Human Rights Watch-ը հայտարարել էր, որ վերլուծել է կասետային զինամթերքի մնացորդների լուսանկարները, որոնք արվել էին միջազգային և տեղական լրագրողների և բնակիչների կողմից հարձակման վայրում և դրա մոտակայքում: Բացահայտվել է, որ դրանք կասետային զինամթերքով «Սմերչ» տեսակի հրթիռներ էին: Համաձայն Human Rights Watch-ի անդրադարձի՝ Հայաստանի զինված ուժերն ունեն «Սմերչ» հրթիռային կայանքներ, իսկ Լեռնային Ղարաբաղի ուժերը՝ ոչ: Հետևաբար, **հավանական է, որ հայկական ուժերը հարձակում են իրականացրել կամ զինամթերք են հասցրել Լեռնային Ղարաբաղի ուժերին:** Human Rights Watch-ը Հայաստանին կոչ արեց անհապաղ դադարեցնել կասետային զինամթերքի կիրառումը կամ դրանց մատակարարումը Լեռնային Ղարաբաղ:<sup>17</sup>

Հոկտեմբերի 30-31-ին արդեն սոցցանցերում տարածվեցին զանգվածային ոչնչացման, քիմիական տարրեր պարունակող զինատեսակների օգտագործման վերաբերյալ տեսանյութեր: Հայկական կողմը հայտնեց, որ Ադրբեջանն օգտագործել է ֆոսֆոր պարունակող զենք, որն ունի քիմիական զենքի տարրեր, դրանք ուղղել է քաղաքացիական բնակավայրերի հարևանությամբ գտնվող անտառներին, որտեղ պատսպարվում էին նաև խաղաղ բնակիչներ:<sup>18</sup>

Նոյեմբերի 6-ին Հայաստանի և Արցախի ՄԻՊ-երը հրապարակեցին համատեղ զեկույց՝ ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախում հրկիզող, քիմիական

<sup>15</sup> [https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=723396871592854&id=100017676420633](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=723396871592854&id=100017676420633)

<sup>16</sup> <https://www.facebook.com/ArmenianUnifiedInfoCenter/posts/825386288297300>

<sup>17</sup> <http://interfax.az/view/817966>

<sup>18</sup> [https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=742603376338870&id=100017676420633](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=742603376338870&id=100017676420633)



տարրեր պարունակող (հնարավոր է՝ սպիտակ ֆոսֆոր), միջազգային կոնվենցիայով սահմանափակված կիրառելիության զինատեսակ գործադրելու վերաբերյալ: Արտահերթ զեկույցի հետևությունները հիմնված են զեկույցում ներկայացված ապացույցներով՝ քաղաքացիական բնակիչների մարմինների վնասվածքների լուսանկարներով, քարտեզային ցուցադրող պատկերներով և այլն:<sup>19</sup>

Ադրբեջանի գլխավոր դատախազությունն էլ, Հայաստանին մեղադրելով Լեռնային Ղարաբաղ ֆոսֆորային զինամթերք հասցնելու մեջ, այդ փաստի առթիվ քրեական գործ է հարուցել:<sup>20 21</sup>

Ադրբեջանի օմբուդսմենը հայտարարել էր, որ Հայաստանի ԶՈՒ կողմից ռազմական գործողությունները և արգելված տեսակի զենքի օգտագործումը հանգեցրել էին ոչ միայն շրջակա միջավայրի ֆիզիկական և քիմիական աղտոտմանը, այլև բույսերի և կենդանիների հազվագյուտ տեսակների ոչնչացմանը: Ս. Ալիևան խնդրել էր պատասխանատվության կանչել Հայաստանին Շուշիի անտառները այրելու, ջրային ավազանները թունավորելու, առաջնային շրջաններ ջրի հոսքի կանխամտածված կրճատման և դաշտերի ապօրինի շահագործման համար:<sup>22</sup>

*Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ փոխադարձ մեղադրանքներ են հնչում, որոշ դեպքերում առանց հիմնավոր ապացույցների, որոշ դեպքերում էլ՝ հիմնավորված: Ամեն դեպքում, այս հարցով ՄԱԿ-ի համապատասխան մարմինները քննություն են իրականացնում:*

## **Վարձկաններ**

Պատերազմի երրորդ օրն արդեն միջազգային մի շարք լրատվականներ հայտնում էին Թուրքիայի կողմից Սիրիայի հյուսիսային հատվածից Ադրբեջան տեղափոխված զինյալ վարձկանների մասին՝ Արցախի ու Հայաստանի դեմ օգտագործելու նպատակով: Խոսքը 3.000-4.000 զինյալ վարձկանների մասին էր:<sup>23</sup>

Հոկտեմբերի 3-ից սկսած ՄԱԿ-ի աշխատանքային խմբին ՀՀ ՄԻՊ-ը ներկայացրել է 4 դիմում, որոնցում վերլուծվել և ՄԱԿ են ուղարկվել ապացույցներ վարձկանների հավաքագրման, տեղափոխման և վարձատրության հարցերի վերաբերյալ:

<sup>19</sup> <https://ombuds.am/images/files/ea04773e0fcf3a7e4dad87e9b73d360.pdf>

<sup>20</sup> <http://interfax.az/view/818097>

<sup>21</sup> <http://interfax.az/view/820203>

<sup>22</sup> <https://nia.eco/2020/11/08/8497/>

<sup>23</sup> <https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-turkey-syria-idUSKBN26J25A>,

<https://www.alarabiya.net/arab-and-world/2020/09/29/1500-بازبيجان-الى-سوريين-مرتزقة-تضخ-تركيا-دولار>, <https://www.theguardian.com/world/2020/sep/28/syrian-rebel-fighters-prepare-to-deploy-to-azerbaijan-in-sign-of-turkeys-ambition>, <https://www.bbc.com/arabic/middleeast-54346711>

Այդ և այլ ապացույցների վրա հիմնվելով՝ ՄԱԿ-ի վարձկանների հարցով խումբն արձանագրել է Արցախում նրանց օգտագործման փաստը: **Աշխատանքային խումբը կոչ է արել աջակցող պետություններին անմիջապես դուրս բերել վարձկաններին և մասնակցություն չունենալ վարձկանների հետագա հավաքագրմանը, ֆինանսավորմանը և տեղափոխմանը:**<sup>24</sup>

Ադրբեջանի ղեկավարությունը, հերքելով այդ փաստը, Հայաստանին է մեղադրել ռազմական գործողություններին ահաբեկիչների ու վարձկանների մասնակից դարձնելու համար: Ադրբեջանի արտգործնախարարությունը ՄԱԿ-ին զեկույց է ներկայացրել սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ադրբեջանի դեմ մարտերում Հայաստանի կողմից վարձկանների և օտարերկրյա ահաբեկիչների օգտագործման մասին:<sup>25</sup>

Չնայած այդ ժխտումներին, տարբեր երկրներ, այդ թվում Ֆրանսիան, Ռուսաստանը և ԱՄՆ-ը, բազմիցս հայտարարել են դարաբաղյան հակամարտության գոտում վարձկանների առկայության մասին:

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Ստանիսլավ Չասն էլ փետրվարի 2-ին առցանց ճեպագրույցում հայտնեց, որ նրանք ունեցել էին տեղեկատվություն դարաբաղյան հակամարտության գոտում Սիրիայից վարձկանների ներկայության ու գործողությունների մասին:<sup>26</sup>

*Այսպիսով, Հայաստանի և Արցախի ՄԻՊ-երի աշխատանքի արդյունքում ներկայացված ապացույցները հստակ հիմք են նշված գոտում վարձկանների առկայության մասին, և այդ փաստը հաստատել են թե՛ միջազգային կառույցները, թե՛ տարբեր պետություններ, թե՛ միջազգային լրատվամիջոցներ:*

## **Եզրակացություն**

Հաշվի առնելով Հայաստանի և Արցախի ՄԻՊ-երի իրականացրած քայլերը՝ թե՛ միջազգային կառույցների, թե՛ Ադրբեջանի իրավապաշտպան մարմինների արձագանքները, և փորձելով իրականացնել համեմատական վերլուծություն, կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները՝

- գրեթե բոլոր հարցերում հակամարտող կողմերը մեղադրում են միմյանց,
- հակամարտության երկու կողմերն էլ սեփական քաղաքացիական անձանց իրավունքների պաշտպանության համար դիմում են տարբեր միջազգային մարմինների և սպասում են վեջիններիս պատշաճ արձագանքին,

<sup>24</sup> [https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=755802805018927&id=100017676420633](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=755802805018927&id=100017676420633)

<sup>25</sup> <http://interfax.az/view/818684>

<sup>26</sup> <https://www.youtube.com/watch?v=iPd11fNU1po>

- ՀՀ ՄԻՊ-ը գործնական քայլեր է ձեռնարկում գերինների (այդ թվում՝ «ահաբեկիչներ» որակվածների) անհապաղ վերադարձն իրականացնելու, հակառակորդի կողմից արգելված զինատեսակների օգտագործման փաստման ուղղությամբ,
- Միջազգային կառույցները և մի շարք երկրներ հաստատում են հայկական կողմի տարածաշրջանում վարձկանների առկայության մասին արված հայտարարությունները,
- ՀՀ ՄԻՊ-ը միջազգային կառույցների հետ իր հաղորդակցության հիմքում դնում է ապացույցներով հիմնավորված փաստեր, պնդումներ:

Այս ամենը հիմք է տալիս ասելու, որ Հայաստանի և Արցախի ՄԻՊ-երը գործնական քայլեր են իրականացնում հակամարտության գոտում մարդկանց հիմնարար իրավունքների խախտումների մասին միջազգային կառույցներին և հանրությանը ոչ միայն տեղեկացնելու, այլև համարժեք պատասխաններ, քայլեր պահանջելու առումով՝ փորձելով ծավալել հնարավորինս արդյունավետ գործունեություն: